

5.2.-5.7.Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն)¹⁹

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 104 վիճակագրական աշխատանքները (520001-520041, 530001-530007, 540001-540010, 550001-550009, 550011, 550013, 560001-560024, 570001-570011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված այս ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 104 վիճակագրական հաշվետվությունների ձևերով: ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» և «Ամսվա ընթացքում դիտված հիդրոօդերևութաբանական պայմանների մասին» ամսական տեղեկանքներով, «Հայաստանի Հանրապետության տարածքի կլիմայական պայմանների և մակերևութային ջրային օբյեկտների վիճակի գնահատում» եռամսյակային տեղեկանքով և «Մակերևութային ջրերի քանակի և որակի մասին» տարեկան տեղեկագրով, ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրով, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հանցագործություններ» տարեկան տեղեկագրով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի վերլուծություն» եռամսյակային ամփոփագրով:

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 69 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 5-ը՝ կիսամյակային, 55-ը՝ տարեկան, և 1-ը՝ եռամյա պարբերականությամբ:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 11 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 10-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են այդ ոլորտին առնչվող բոլոր վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել ներառված ցուցանիշների կազմում:

¹⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Վարչական ռեգիստրների ստեղծման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- վերջնականապես ձևավորվել է ՀՀ գիտության և կրթության նախարարության համակարգում գործող 1-հանրակրթություն «Հաշվետվություն հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևը: Ներդրվել է նոր վարչական վիճակագրական տարեկան հաշվետվություն՝ Չև թիվ 1-ՏՖ (կրթություն) «Տնտեսական և ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշներ կրթության ոլորտում»: Կրթական մնացած ոլորտների վարչական վիճակագրության վարման աշխատանքներն աշխատանքային քննարկումների փուլում են,
- շարունակվել են աշխատանքները ՀՀ առողջապահության նախարարության հետ համապատասխան պետական վիճակագրական ամփոփ հաշվետվային ձևերի մշակման համար,
- շարունակվել են ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի համակարգում վարչական ռեգիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման աշխատանքները,
- շարունակվել է գործնական օժանդակությունը ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում վարչական վիճակագրական ռեգիստրի ամբողջական ձևավորման գործընթացին:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների ստեղծման և վարման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության, բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվում սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները: Մշակվել և փորձնական ներդրման փուլում է բնապահպանության համակարգում ֆինանսական ներդրումների և ծախսերի ընդհանրացված հաշվառման ձևը: